Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ « Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Հաստատություն՝ «Ծիծեռնակ» մ/մ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Դավթյան Գոհար

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1 Ազգային տոներ, ծեսեր. Նկարագրությունը.....5

1.1 Ինչ է տոնը, ծեսը.....5

1.2 Տոների և ծեսերի կազմակերպման ընթացքը.....8

1.3 Տեխնոլոգիական գործողություն.....9

1.4 Ծիսական խաղերի իրականացում.....9

1.5 Ազգային ծիսական երաժշտություն.....11

1.6 Տոների, ծեսերի կազմակերպումը բացօթյա միջավայրում.....11

Գլուխ 2 Ազգային տոների, ծեսերի կազմակերպումը և անցկացումը նախադպրոցական հաստատություններում.....12

2.1 «Սուրբ զատիկ» միջոցառում.....12

2.2 Ազգային տոն «Ջանգյուլում» միջոցառում.....17

Եզրակացություն.....21

Գրականության ցանկ.....22

Ներածություն

Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու,
Մտածելու և զգալու ունակությունները:
Չկա ավելի հիմար բան, քան փորձել
փոխարինել դրանք մեր ունակություններով:
Ժան Ժակ Ռուսո

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները:

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:Տոներին և ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք:

Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

ԳԼՈՒԽ 1 Ազգային ծեսեր, տոներ. նկարագրություն

1.1 Ինչ է տոնը և ծեսը

Տոն, օրացույցում նշված ժամանակահատված՝ նվիրված ինչ-որ բանի կամ որևէ մեկի պատվին, որն ունի սուրբ (ոչ կենցաղային, միֆական) նշանակություն և կապված է մշակութային կամ կրոնական ավանդույթի հետ:

Միխայիլ Բախտինն ասել է, որ տոնը «մարդկային մշակույթի առաջնային ձևն է» : Տոնի բաղադրիչական նշանակությունն այն է, որ տոնի միջոցով որոշվում է հասարակությունը համախմբող արժեքների համակարգը: Տոնը բաղադրության համընդհանուր և ամենակարևոր առանձնահատկությունն է, միևնույն ժամանակ, տոների առանձնահատկությունները արտացոլում են բաղադրությունների միջև եղած տարբերությունները:

Ինչպես նշել են Էմիլ Դյուրկհեյմը և Միրչա Էլիադեն, տոնը մարդկային գոյության սրբազան և աշխարհիկ կողմերի անմիջական շփման շրջանն է, որոնք գործնականում չեն հանդիպում առօրյա կյանքում: Տոնի օրացուցային բնույթը ներդաշնակեցնում է մարդու կյանքի ռիթմերը և տիեզերքի ռիթմերը, օգնում է ընտրություն կատարել հոգուտ կարգի, իմաստի, կյանքի և քաոսի ու մահվան դեմ («կյանքի հաստատում»՝ ըստ Հ. Քոքսի): Տոնը կապված է որոշակի կատարյալ կյանքի գոյության գաղափարի հետ, որը հիմնովին տարբերվում է առօրյա կյանքից՝ հաճախ ունենալով ուտոպիայի առանձնահատկություններ (ըստ Բախտինի՝ «ժամանակավոր ելք դեպի ուտոպիական աշխարհ»): Ուստի տոնական մշակույթը հաճախ ներառում է ժամանակավոր հրաժարում հասարակության մեջ ընդունված վարքի նորմերից, սոցիալական հիերարխիայի ժամանակավոր ջնջում կամ հակադարձում:

Տոները ավանդույթի էական տարր են, և որպես այդպիսին կատարում են հասարակության կայունարարի դեր՝ պահպանելով և սերնդեսերունդ փոխանցելով սոցիալական նշանակության ունեցող տեղեկատվությունը: Տոներին մասնակցելը մարդկանց ծանոթացնում է հասարակության ընդունված նորմերին և արժեքներին: Քանի

որ տոնը սոցիալական ինտեգրման մեխանիզմ է, այն անխուսափելիորեն ներգրավվում է իշխանության մեխանիզմում: Ըստ Անատոլի Մազաևի՝ կառավարությունը «գտնվում է մոտավորապես նույն տեղում, ինչ տոնը՝ սրբազան մակարդակում»: Մազաևն այստեղ մատնանշում է անտինոմիան. իդեալական ուտոպիայի աշխարհը տոնի մեջ զուգորդվում է գործող հասարակական կարգի կայունացնող մեխանիզմի հետ:

Տոնի առաջացումը կապված է մարդկության մոտ ժամանակի և օրացույցի հայեցակարգի առաջացման հետ: Ըստ Ժիգուլսկու՝ «Ժամանակի հաշվարկը մարդկային մշակույթի ամենամեծ նվաճումներից մեկն է, օրացույցն իր ծագմամբ ամենուրեք հանդես է գալիս որպես տոների և ժամանակաշրջանների կարգավորման, համախմբման և դրանց նախօրոք հաշվարկման ձև» : Օրացույցի գյուտը կատարվել է այն գիտակցման շնորհիվ, որ ժամանակացույցում կան հատուկ կետեր, որոնք համապատասխանում են բնության ցիկլերի փոփոխությանը կամ հասարակության զարգացման փուլերին: Բախտինը նշում է. «... տոները իրենց պատմական զարգացման բոլոր փուլերում կապված են եղել բնության, հասարակության և մարդու կյանքի խոշորագույն, բեկումնային պահերի հետ» :

Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ: Մարդաբան Մ. Դուգլասը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են:

«Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք:

Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

… Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:

Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է (ритуал): Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ իրավիճակներում (ծնունդ, պսակադրություն, մահ, իշխանության փոփոխություն և այլն): Ըստ Ա.Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»: Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ, ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես բնադատ: Ծեսերը և սովորույթները

հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են: (Ա. Ա. Գեղամյան, «Ծեսը, ծիսակարգը և սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ»):

Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող ու ակտիվ փոխանցող:

1.1.2 . Տոների և ծեսի կազմակերպման ընթացքը

Երեխաները տոների, ծեսերի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են:Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ, բաժանում աշխատանքը, դիտարկում, պատմում իրենց արածի, տեսածի ու զգացածի մասին: Տոների, ծեսերի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում:Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը:Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի:Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը:

Նախ նշենք, երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով:Այդ իսկ պատճառով ծեսերի իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան:

1.1.3. Տեխնոլոգիական գործողություն

(Տոների ծեսերի անհարաժեշտ պարագաների պատրաստում)

Շատ կարևոր է երեխային ներգրավել տոների ծեսերի նախապատրաստական աշխատանքներին:Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու:Այս ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին, քննարկում, թե ինչն են սիրում ինչն է իրենց դուր գալիս ևա այլն:Նրանք դաստիարկի միջամտությամբ կարող են պատմել օրինակ ծիսական տիկնիկի նշանակության մասին: Ինչն էլ խթան է հանդիսանում ավելի սիրել ու կարևորել իրենց ստեղծածը:Այդ ամենի մասին պատմել ընտանիքի անդամներին ու ընկերներին:Նրանք այս ամենի շուրջ իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնել նոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իրենց հոգուն ու միջավայրին է հարազատ:Հենց այն ամենը շատ մեծ ազդեցություն է թողնում երեխայի խոսքին նպաստող՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:

1.1.4. Ծիսական խաղերի իրականացում

Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, սակայն մենք ունենք պարզ ու գեղեցկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ մեծ արդյունք՝ երեխայի խոսքի զարգացման հարցում:Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր:

Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, նոր տեղեկություններ ստանալ ու զարգացնել ունեցած հմտությունները:

Ծիսական ու մանկական խաղերը ազդում են երեխայի խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Ինչպես նշեցինք ծեսի իրագործումը ինքնին կարելի է խաղ համարել:Երբ երեխան կատարում է երկրագործի աշխատանք՝ դա ևս խաղ է , որ երեխան խաղում է՝ կրկնօրինակելով հայրիկին, պապիկին, մայրիկին և այլն:Նա փորում է, ջրում, տնկում:Դա արվում է խմբակային, որտեղ երեխան ձեռք է բերում հերթով գործողություն կատարելու, մեկը մյուսին զիջելու կարողություն:Ամենակարևորը՝ երեխաները հայտնաբերում են , որ մյուսների հետ խաղալն ու աշխատելը հաճելի է:Այս ամենը շատ արդյունավետ ազդում է երեխայի սոցիալակն զարգացումն վրա:

Ծիսական խաղերը շատ դրական է ազդում նաև երեխայի զգացմունքային զարգացման վրա:Խաղի ժամանակ նրանց մոր դրսևորվում է վախեր (օրինակ՝ ձուն կովեցնելու ժամանակ կարող է իր ձուն կոտրվել), հույսեր (որ ամպայման ինքն է հաղթելու), ուրախություն (հաղթելու դեպքում):

Ծիսական խաղը շատ կարևոր ազդեցություն է գործում երեխայի մտավոր զարգացման վրա:Ինչպես գիտենք օրինակ կան բազմաբովանդակ ձվախաղեր ու ընկուզախաղեր, որոնք զարգացնում են երեխայի իմացական հմտությունները:Իմացակն հմտությունների հարցում մեծ նշանակություն ունի նաև երեխաների հետ կազմակերպած երկրագործի աշխատանքները, ինչի շնորհիվ երեխան ձեռք է բերում գիտելիքներ բնության երևույթների մասին և հրստացնում բառապաշարը նոր բառերով: Այդ խաղերի միջոցով նրանք փորձում են կապեր գտնել լսած տեղեկությունների ու կատարած գործողությունների միջև, ստեղծագործել ու ավելացնել նորը; Նրանք փորձարկում են այդ ամենը և սովորում փորձի ու սխալի միջոցով:Ծիսական խաղը ոչ միայն

նպաստում է երեխայի մտավոր զարգացմանը այլև մտածողության և հաղորդակցման համար խիստ կարևոր՝ լեզվական հմտությունների կիրառմանը:

1.1.5. Ազգային ծիսական երաժշտություն

Երաժշտությունը հաղորդակցության համընդհանուր և հզոր միջոց է: Երաժշտությունը մեծապես օգտագործվել է երեխաների հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաներն իրենց էությամբ բնածին երաժշտահաներ են: Սրա հետ համատեղելով ազգային ծիսական երաժշտությունը երեխայի մոտ ձևավորվում է բարձր ճաշակ ու մետեցում հայ մշակույթի արմատներին:

1.1.6. Տոների, ծեսերի կազմակերպումը բացօթյա միջավայրում

Քանի որ ազգային ծեսերից շատերը առնչվում են բնության հետ (օրինակ՝ Ծաղկազարդ, Համբարձում և այլն) հիմնականում պետք է կազմակերպվեն բացօթյա միջավայրում: Ինչն էլ իր հերթին նպաստում է երեխայի աճի և զարգացման համար: Երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այդ թվում՝ խոսքային և մտավոր զարգացման մակարդակները, նկատելիորեն առաջադիմում են բացօթյա միջավայրի հետ շփվելու ընթացքում:Երեխայի և բնության հետ ստեղծվում է ներդաշնակ կապ:Ինչպես նաև բացօթյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկն ընկալելու:

ԳԼՈՒԽ 2 Ազգային տոների, ծեսերի կազմակերպումը նախադրոցական հաստատություններում

2.1 «Սուրբ զատիկ» միջոցառում

Զատիկը մեկն է ամենագեղեցիկ եւ ամենագեղեցիկ տոներից մեկը: Երիտասարդ տարիքից երեխաները պատմում են այս պայծառ օրվա մասին եւ մանկապարտեզում կազմակերպում են Զատկի տոն: Զատիկի տոնի ժամանակ մանկավարժների խնդիրը երեխաներին բացատրելն է, թե ինչու է դա ամենակարեւոր մարդկանց համար: Ահա թե ինչոպեսեն նախապատրաստվում Զատիկին մանկապարտեզում, անհրաժեշտ է ճիշտ ցցենար մշակել, որը կհետաքրքրի երեխաներին:

Հնչում է Մ. Եկմալյանի « Սուրբ, սուրբ» շարականը: Երեխաները կանգնած են դեմքով դեպի եկեղեցին:Հնչում են եկեղեցու զանգերը, ապա երեխաները ասում են մանուկների աղոթքը: Շրջվում և կանգնում են կիսաշրջանաձև:

Բարի լուրի զանգեր զարկին՝

Զնգզնգացին անուշ–անուշ,()

Լույսը բացվեց մեր աշխարհին՝

Զատկի լուրով անուշ–անուշ:

Բոլոր աշխարհ կբերկրի,

Զատկի զանգեր կհնչեն,

Կարձագանքեն լեռ, սար ու ձոր,

Սուրբ Զատիկը կավետեն:

(դաստիարակ)– Այսօր «Զնգակ» խմբի երեխաները ներկայացնելու են հայ առաքելական եկեղեցու տաղավար տոներից մեկը՝ Սուրբ Զատիկը:

Մեծ զատիկն է, Սուրբ Զատիկը,

Եկեք նշենք այս սուրբ տոնը,

Երբ Հիսուսը նորից ծնվեց

Եվ իր օրհնանքը մեզ տվեց:

Նորն է ծնունդ առնում այսպես,

ՈՒ շարունակ պտույտ գալիս,

Դա հրաշք է, ուրիշ էլ ինչ,

Եվ անունն է այդ հրաշքի

Հարություն կամ կարմիր Զատիկ:

Երգ–«Ցալաչի»

Դռան առաջ հերկեցին,

Զատկի ձվեր ներկեցին,

Իրար ողջույն տվեցին,

Զատկի տոնը տոնեցին:

–Զատիկն է, նավակատիկ է, չամչահատիկ է: (Արտասանում են երեխաները)

Հայկական ժողովրդական պար «Զմփիկ–զմփիկ»:

Երեխաները հանելուկներ են առաջարկում:

–Կարաս ունեմ մի պուճուր,

Մեջը երկու գույնի ջուր

Մի տուն ունեմ, դուռ չունի,

Դուրսն արծաթ, մեջը՝ ոսկի:

Թևեր ունի չի թռչու,

Ածան է, չի կչկչում:

Երգ–« Կարին–կարին–կարկաչա»

(դաստիարակ) – Զատկական տոնահանդեսներն ուղեկցվել են խաղ– մրցույթներով»:

–«Խազ–պար փայտերով»

Պարում և խաղում են տղաները:

(դաստիարակ)– Մրցույթներից ավելի շատ տարածված են եղել ձվախաղերը:

Կարմիր– կանաչ ձվիկներով

Խաղանք ուրախ ու կովարար

Ջան ինչ լավ է, որ Զատիկ է,

Տեսեք, ինչքան շատ ձվիկ է:

Դե շուտ արեք, շուտ արեք,

Բոլորդ այստեղ եկեք,

Ձու հաստրեք, շուտ բերեք:

Եկեք արագ հավաքվենք,

Մեկս–մեկու մենք հաղթենք:

Ազգագրական երգ «Բոլոնիկ» երգում է խումբը:

Երեխաները խաղում են ձվախաղեր:

Ներգրավում ենք նաև հյուրերին և ծնողներին:

Խաղերի ավարտից հետո արտասանում են

(Խումբը) –« Քրիստոս հարյավ ի մեռելոց»

(Պատասխան)– Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

(Խումբը)– Մեզ և Ձեզ մեծ ավետիս, շնորհավոր սուրբ զատիկ:

2.2 Ազգային տոն «Զանգյուլում» միջոցառում

Բակը ներկայացնում է հայկական կոլորիտ

Մուտք– « Կախարդված ծաղիկներ» երաժշտության ներքո երեխաները պարելով ներս են մտնում:

- Մեր փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը իր հրաշափառ հարությունից հետո 40օր շրջեց աշխարհում և գործեց բազում հրաշքներ:
- Հայ առաքելական եկեղեցին մեծ շուքով տոնում է համբարձման տոնը ի հիշատակման մեր փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի համբարձման:
- Համբարձման տոնին հայ առաքելական եկեղեցու բակում եփվում է կաթնով, որպես համբարձման տոնի կերակուր և բաժանվում ժողովրդին:

Երգ (մանկական երգարան) «Հիսուս ինձ անչափ սիրեց»

Կժերն առած թովռալով

Ջուր են իջնբում աղջիկներ

Խնդում իրար ուսի տալով

Երգն է գնգում սարն ի վեր:

–Գնանք, գնանք ինչ բերենք

Ցոր աղբյուրից ջուր բերենք:

Ազգային պար

–Իմ ծաղիկը քաղածա,

Բարձր սարում պահած,

Որ լուսնական դուրս կգա

Իմ ծաղիկը լույս կտա:

–Գարնան սիրուն ծաղիկ ես

Ինձ համար աղունիկ ես

Գլխիս վրա պտույտ տուր

Նախշուն թև թիթեռնիկ ես:

–Համբարձումը գալիսա,

Ծաղիկը ցնծալիսա,

Համբարձում կանչող աղջիկ

Ձեզնդ ծլվծածիսա:

–Երգ «Մանի ասեմ»

Համբարձումը եկավ ծաղկով

Զուգվելեն հանդեր գորգերով,

Համբարձումը եկավ ծաղկով

Հազար ու մի բարիքով:

–Վիճակ–վիճակ կանչեցին

Սիրուն ծաղիկ քաղեցին

Սպիտակ նժույգ հեծեցին

Շուտ մուրազին հասցրին:

–Երգ «Ամպի տակից ջուր է գալիս»

–Արևը կամար, կամար

Կապել ես ոսկե քամար:

–Պար «Լեռնապար»

Պարից հետո կատարվում է վիճակահանություն, վիճակահանությունը կատարում է ծաղկամայրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝

1. Տոնը, ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են տոնը, ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

2. Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՎԱԳ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ (5-6 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ)

2. ՀՌԻՓՍԻՄԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՈՒս.մեթոդական ձեռնարկ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԿՐՏՍԵՐ 2-ՐԴ ԵՎ ՄԻՋԻՆ ԽՄԲԵՐՈՒՄ

3.Ա. ՋԻԲՈՒԽՋՅԱՆ ՈՒս.մեթոդական ձեռնարկ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՎԱԳ ԽՄԲՈՒՄ

4. https://liliazakharyan.wordpress.com/2019/04/30/

5. https://tevanyanseda.home.blog/2019/05/11/

6. https://siranushbadishyan.wordpress.com/2018/06/09/362/

7. https://larisamkrtchyan.wordpress.com/2017/11/15